թըմներ չուրի չ'երթամ բերեմ, իդա բաժակ իմ բերան չ'առնիմ։

Խոր-Մանուկ ըսեց.—Քեռի-Թորոսիկ, խմիս՝ խմէ, չըս խմի, իզին տու թըղ մարդիկ երթան։

Քեռի-Թորոսիկ լէ ըսեց.—Հացն ու գինին, Տէր կենդանին, չուրի ես իմ հէթըմներ չբերիմ, ես բաժակ իմ բերան չ'առնիմ։

Իզին էրեց, մարդիկ էլան գացին։

Մնաց յարի լուսցաւ։

Ու Քեռի-Թորոսիկ էլաւ, ընկաւ ճամբախ ու գնաց Մսրամելիքի կուշտ, ըսեց.—Մսրամելիք, տուր իմ տղեկներ տանիմ, ինչ օր պահեցիր բոլ է։

Ըսեց.—Քեռի-Թորոսիկ, ըսեց, քու տղեկներ գան իմ թրի տկով ընցնին, ա՛ռ, գնա՛։

Քեռի-Թորոսիկ լէ ըսեց.—Թըղ գան ընցնին։

Մսրամելիք թուր քաշեց կայնաւ դուռ. տղեկներ լէ էկան, օր պդի ընցնէն. մեծ տղան Ցռան-Վէգոն է, եօթ գըմշու ղուաթ ունի, էկաւ խառ ընցաւ. Փոքրիկ-ճնճղիկ[1]) եօթ գըմշու ղուաթ ունի, էն լէ վաղաւ, ընցաւ։

Նոբաթն էկաւ Դաւթին։

Քեռի-Թորոսիկն ըսեց.—Դաւիթ, արի, ընցի Մսրամելիքի թրի տկով։

Ըսեց.—Զըմ ընցընի։

Քեռի-Թորոսիկ հարցուց.—Ցո՞րի չըս ընցընի։

Ըսեց.—Էղաւ օր ժամանակ ընցաւ, ես ու էդիկ հող ու ջրի շիրիգ ինք, մեր մէջ վէճ բացուաւ ու կռիւ էրեցինք, էդ ընձի թրով զարկեց, ըբա ես չ'զարկի՞մ։ Ըսեց՝ չըմ ընցընի ես ըդոր թրի տկով։

Քեռի-Թորոսիկ քաշեց, օր զօռով տանէր, ընցուցէր։

Ու թոթուեց Քեռի-Թորոսկին. Քեռի-Թորոսիկ գնաց դէն ընկաւ ու Դաւթի ըղունգ առաւ քարին ու կրակ տուեց։

---

[1]) Ա. վարիանտում միշտ ճնճղիկ-Փոքրիկ։